МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

ք. Երևան **14.11.2024թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/197»

(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2024 թվականի սեպտեմբերի 20-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է համակարգչային տեխնիկայի ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/197» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև Ա/Ձ Արթուր Հարությունյան Սերյոժայի կողմից (ՀՎՀՀ՝ 27959977, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 3-րդ նիստի արձանագրության 8-րդ կետով Ընկերությունը Ընթացակարգի հրավերի 5-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ 2024 թվականի նոյեմբերի 1-ի 4-րդ նիստի արձանագրության 2.2 կետով ամրագրվել է, որ Ընկերությունը Հայաստանի Հանրապետության գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր չի կնքել և այն համակարգ չի վերբեռնել, ուստի նույն նիստի արձանագրության 3.1 կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա Ընթացակարգի համապատասխան չափաբաժինը համարել չկայացած:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «եթե ընտրված մասնակիցը

պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում (5 աշխատանքային օր) չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա **նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից**», իսկ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի համաձայն «մասնակիցն ընդգրկվում է նշված (գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների) ցուցակում, եթե որպես **ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից**»:

Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով, ինչպես նաև հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

ՈՐՈՇԵՑ

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐՈՎ
ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ